



Երևանի պետական համալսարան. Արիզոնայի պետական համալսարան կացության ծրագրով մեկնելու երրորդ մրցույթի հայտարարություն

Ծրագրի անվանում՝ Ամերիկյան հետազոտություններ

Ծանոթագրություն. ԵՊՀ Ամերիկյան հետազոտությունների կենտրոնի հիմնական նպատակներից է հավատարմագրված, միջազգայնորեն ճանաչված ամերիկյան հետազոտությունների (ամերիկագիտության) մագիստրոսական կրթական ծրագրի մշակումը և իրականացումը: Մագիստրոսական կրթական ծրագրի զարգացման գործում Երևանի Պետական Համալսարանը համագործակցում է Արիզոնայի պետական համալսարանի հետ: 2020-2021 և 2021-2022 ուս.տարիների ընթացքում նախատեսվում է դասախոսական կազմի համար հատուկ ծրագրի գործարկում, որը հնարավորություն կընձեռի առավելագույնը ութ դասախոսների կիսամյակային կացության ծրագրով մեկնել Արիզոնայի պետական համալսարան՝ ամերիկյան հետազոտությունների թիրախային բնագավառներում համապատասխան կրթական դասընթացներ մշակելու համար:

Պրոֆեսորադասախոսական կազմի այն ներկայացուցիչները, որոնք հետաքրքրված են Արիզոնայի պետհամալսարանում կիսամյակային կացության ծրագրով, հրավիրվում են մասնակցելու բաց մրցույթի (դիմում-հայտի ձևը կցված է ստորև): Ամերիկյան հետազոտությունների կենտրոնը հիմնված է և գործում է ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետում, սակայն մրցույթին մասնակցելու համար հրավիրվում են նաև ամերիկագիտության կամ հարակից ակադեմիական գիտակարգերով հետաքրքրված ԵՊՀ դասախոսներն ու հետազոտողները:

Ծրագրի իրականացման ժամկետները. Կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակից ելնելով՝ մրցույթը հաղթահարած դիմորդների ընտրված խումբը գտնվելու է Արիզոնայի պետական համալսարանում քառամսյա ժամկետով՝ կամ *2021թ. հունվարի սկզբից մինչև մայիսի սկիզբ, կամ 2021 թ. օգոստոսի վերջից մինչև դեկտեմբերի վերջ:*

Ի՞նչ են անելու հաջողակ դիմորդները Արիզոնայում կեցության ընթացքում. Կիսամյակային կացության ծրագրով Արիզոնա մեկնած գիտնականները կիսամյակի ընթացքում կմասնակցեն ամերիկագիտության և ամերիկյան հետազոտությունների ոլորտի առնվազն երկու դասընթացների/սեմինարների, ինչպես նաև կպատրաստեն առնվազն երկու դասընթացի ծրագրեր: Ընդ որում, ծրագրի մասնակիցների կողմից մշակված դասընթացներից առնվազն մեկը հետագայում պարտադիր դասավանդվելու է անգլերեն լեզվով:

Կեցության ծախսերը. Արիզոնայի պետական համալսարան այցելող գիտնականները կստանան ամսական մոտ 1600 ԱՄՆ դոլար աշխատավարձ: Բացի այդ, մասնակիցներին կտրամադրվի 1000 ԱՄՆ դոլար նպաստ՝ համապատասխան դասընթացների համար անհրաժեշտ գիտա-կրթական նյութեր ձեռքբերելու համար: Փոխանակման ծրագրի մասնակիցների ընտանիքի անդամների մեկնում ԱՄՆ նախատեսված չէ:

Ո՞վքեր իրավունք ունեն դիմելու. Խրախուսվում են ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի բոլոր ներկայացուցիչների և ասպիրանտների, ինչպես նաև Երևանում գտնվող հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների պրոֆեսորադասախոսական կազմի բոլոր անդամների դիմումները, ովքեր մասնագիտացած են հասարակական գիտությունների ոլորտում և ունեն ամերիկագիտության հետ կապված ուսուցման և/կամ հետազոտական հետաքրքրություններ: Քանի որ ընտրված մասնակիցները կմասնակցեն սեմինարների ՀՊՄՀ-ում, անհրաժեշտ կլինի անգլերենի իմացություն, որը բավարար է համալսարանական դասընթացներին և սեմինարներին մասնակցելու համար: Համաձայն ՀՊՄՀ բազմազանության հավատարմության և կրթական ծրագրերում և գործունեության մեջ հավասար հնարավորություն ընձեռելու համալսարանի քաղաքականությունը՝ խտրականությունն արգելվում է ռասայի, գույնի, դավանանքի, ազգային ծագման, սեռի, սեռական կողմնորոշման, տարիքի կամ հաշմանդամության պատճառով:

Քանի որ ընտրված մասնակիցները Արիզոնայի պետական համալսարանում պետք է մասնակցեն սեմինարների, ուստի կպահանջվի անգլերեն լեզվի իմացության այնպիսի մակարդակ, որը բավարար կլինի համալսարանական դասերին և սեմինարներին մասնակցելու համար: Նկատի ունենալով Արիզոնայի պետական համալսարանի պարտավորվածությունը՝ բազմազանությունը խթանելու և համալսարանի քաղաքականությունը՝ կրթական ծրագրերում և գործունեության մեջ հավասար հնարավորություններ ապահովելու, արգելվում է խտրականության ցանկացած դրսևորում՝ հիմնված ռասայի, գույնի, կրոնի, ազգային ծագման, սեռի, սեռական կողմնորոշման, տարիքի կամ հաշմանդամության վրա:

Դիմումների վերջնաժամկետը. Ավարտուն դիմումները պետք է ներկայացվեն ոչ ուշ, քան *2020 թ. հոկտեմբերի 23-ը*՝ ԵՊՀ միջազգային համագործակցության վարչություն, ինչպես նաև ուղարկվեն պրոֆ. Ալեքսանդր Մարգարովին՝ էլեկտրոնային փոստի հետևյալ հասցեներին՝ amarkarov@ysu.am և ԱՊՀ «Ամերիկյան հետազոտություններ» ծրագրի համադեկավար, Արիզոնայի պետհամալսարանի Մելիքյան կենտրոնի հիմնադիր տնօրեն պրոֆ. Ստիվեն Բատալդենին՝ stephen.batalden@asu.edu: Ընտրված մասնակիցների հետ հարցազրույցը կանցկացվի *2020 թ. հոկտեմբերի վերջին-նոյեմբերի սկզբին*: Մրցութային հայտի արդյունքների մասին հայտարարությունը կկազմվի մինչև *2020 թ. նոյեմբերի կեսերը*:

Այլ հնարավորություններ. ԵՊՀ ամերիկյան հետազոտությունների նոր կենտրոնը դրամաշնորհային ծրագրի գործողության ողջ ընթացքում կազմակերպելու է հետազոտական և այլ բնույթի դասախոսություններ: Մոտակա ժամանակում այդ մասին հայտարարող ԵՊՀ կայքը բաց կլինի. խորհուրդ ենք տալիս պարբերաբար այցելել և գտնել ձեզ հետաքրքրող տեղեկատվությունը:

Personal Information

Name (FAMILY, first): _____

Home Address: _____

Home and/or Cell Phone: _____

Work Address: _____

Work Phone: _____

Fax: _____

E-mail address: _____

Current position at YSU: _____

My field of specialization is: _____

English Language Skills

English (oral):

___ elementary

___ intermediate

___ advanced

English (written):

___ elementary

___ intermediate

___ advanced

Computer Skills (Please indicate skill level as “none,” “elementary,” “intermediate,” or “advanced”):

E-mail: _____

Windows 95/98 _____

Word processing: _____

Windows NT/2000 _____

Spreadsheets: _____

Mac OS _____

Databases: _____

Photo/graphics software

PowerPoint: _____

Statistical software: _____

Web page development: _____

Other: _____

Prior U.S. Travel (List below any prior U.S. travels, including date and purpose of travel.)

Ակնկալվում է, որ դիմորդները պետք է մշակեն առնվազն երկու դասընթաց (ստորև բերվող ցուցակից առնվազն մեկը). ողջունելի են մասնակիցների կողմից ամերիկյան հետազոտությունների ոլորտում լրացուցիչ դասընթաց(ներ)ի վերաբերյալ առաջարկները, որոնք պետք է դասավանդվեն մագիստրոսի կրթական աստիճանում:

- **History of the US: Critical Thought and the Main Schools**
- **Writing for the Professions**

- **US Political Geography/Regionalism**
- **The US and International Development**
- **American Modern Media and Press: Public Discourses and Politics**
- **US Migration Policy and Diaspora**
- **Ecology and Energy Policy**
- **US – Armenian Relations**
- **The US in the Middle East**

Պահանջվող հավելվածներ (պետք է կներկայացվի հայտի հետ միասին)

1. Հակիրճ ռեզյումե կամ CV. Անհրաժեշտ է ներառել Ձեր գիտական աստիճանը, աշխատանքային փորձը, հրապարակումները, այլ հետազոտություններ և Ձեր նախկին ճանապարհորդություններն արտերկիր (բացառությամբ վերը նշված ԱՄՆ-ի ճանապարհորդության):

2. Տեղեկատվություն Ձեր դասավանդման և հետազոտական հետաքրքրությունների մասին՝ կապված ամերիկյան հետազոտությունների ոլորտի հետ. Ի լրումն Ձեր կողմից նշված հետաքրքրությունների, խնդրում ենք կից ներկայացված ցանկից մատնանշել առնվազն երկու դասընթաց, որոնք դուք կնախընտրեիք մշակել Արիզոնայի պետական համալսարանում գտնվելու ընթացքում: Դրա հետ մեկտեղ, առանձին ներկայացնել ձեր կողմից նախընտրված դասընթացների կրթական վերջնարդյունքների նախնական տարբերակը, թեմաների ցանկը, ինչպես նաև դասընթացների հակիրճ բովանդակային նկարագրերը՝ ոչ ավել, քան մեկ էջի սահմաններում յուրաքանչյուր դասընթացի համար:

3. Մեկ էջի սահմաններում ներկայացնել հետևյալ հարցերի պատասխանները. 1) Ինչո՞ւ եք հետաքրքրված այս փոխանակման ծրագրին մասնակցելու մեջ, 2) Ի՞նչ նպատակների եք հուսով հասնել, եթե ընտրվեք:

Նշում. Եթե Դուք ընտրվել եք մասնակցության համար, ապա Դուք պարտավորվում եք ներկայացնելու Ձեր անձնագրի պատճենը և կից DS2019 հարցաթերթիկի ձևը՝ լրացված:

Լրացուցիչ հարցեր ունենալու դեպքում խնդրում ենք դիմել մեր հետևյալ գործընկերներին .

1. **Ալեքսանդր Մարգարով (amarkarov@ysu.am)**
«Ամերիկյան հետազոտություններ» ծրագրի ղեկավար
2. **Վահագն Ագլյան (aglyan@gmail.com)**
«Ամերիկյան հետազոտություններ» ծրագրի համակարգող
3. **Ստիվեն Բատալդեն (stephen.batalden@asu.edu)**
ԱՊՀ «Ամերիկյան հետազոտություններ» ծրագրի համադեղակավար, Արիզոնայի պետհամալսարանի Մելիքյան կենտրոնի հիմնադիր տնօրեն

Ակնկալիքներ ԵՊՀ այն մասնակիցներից, ովքեր կիսամյակային կացության ծրագրով մեկնելու են Արիզոնայի պետական համալսարան

1. ԵՊՀ մասնակիցները Արիզոնայի պետական համալսարանի ներկայացուցիչներին անհրաժեշտ տեղեկատվություն կտրամադրեն ժամանակին՝ կապված վիզայի ստացման, ուղևորության հետ կապված հարցերի համաձայնեցման և Արիզոնայի համալսարանի դասընթացներին մասնակցության պլանավորման հետ: Մինչ մեկնումը Երևանում կանցկացվի նախամեկնումային կողմնորոշում:
2. Արիզոնա ժամանելուն պես ԵՊՀ մասնակիցները կընդգրկվեն համալսարանի կողմից կազմակերպված նախնական կողմնորոշման միջազատումներում: Ուղղորդումը կներառի ԱՄՆ-ում բարձրագույն կրթության հիմնախնդիրները, Արիզոնայի համալսարանի վարչական կառուցվածքն ու կառավարումը, ինչպես նաև տեղեկատվությունը Համալսարանում ամերիկյան հետազոտությունների մասին:
3. ԵՊՀ մասնակիցներից յուրաքանչյուրը ընդգրկվելու են ամերիկյան հետազոտությունների ոլորտում նախընտրված 2 դասընթացների կրթական գործընթացում:
4. ԵՊՀ մասնակիցները կմասնակցեն շաբաթական սեմինարին, որը կազմակերպվում է հատուկ ԵՊՀ-Արիզոնայի պետական համալսարան գործընկերության համար: Սեմինարները կընդգրկեն մանկավարժական թեմաներ, Ձեր ոլորտին վերաբերող թեմաները և հասարակայնության հետ փոխազդման խնդիրները:
5. Արիզոնայի պետական համալսարանում կիսամյակային կացության ընթացքում ԵՊՀ մասնակիցները կմշակեն գործողությունների համալիր ծրագիր, որը պետք է ներառի ԵՊՀ-ում իրենց կողմից մշակված երկու դասընթացների դասավանդման ծրագիրը՝ օգտագործելով Արիզոնայում գտնվելու ընթացքում մշակված ծրագիրը:
6. Դուք հնարավորություն կունենաք հաղորդակցվելու Ձեր ոլորտի մասնագետ-գործընկերների հետ և երբեմն իրականացնել պրեզենտացիաներ:

Համաձայն եմ վերը նշված պայմաններին և ցանկանում եմ, որ քննարկվի Արիզոնայի համալսարանում կիսամյակային կացության ծրագրում իմ մասնակցությունը :

Ստորագրություն

Ամսաթիվ

Questionnaire to process DS2019 Form for US Visas

This form must be completed by all those selected for the semester-in-residence program.

1. Have you ever been to the United States before under the Visitor Exchange Program:

If yes: From _____ to _____

If yes, what category were you in: student, professor, research scholar, specialist, or short-term scholar:

2. Please write your name as it appears on your passport:

Family Name:

First Name:

Middle Name:

3. Date of Birth (month/day/year):
4. Name of Town and Country of Birth:
5. What citizenship do you hold:
6. In what country are you a permanent resident:
7. Official Title/Position:
8. Your passport number and date of expiration
9. Do you have a U.S. social security number? If yes, please provide that number to us.
10. If you are invited to the project orientation, please be sure to bring a photocopy of the signature page of your passport.